ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

2023 թ-ի Նոյեմբերի 28-ին տեղի ունեցավ Արմավիրի N9 հիմնական դպրոցի մանկավարժական խորհրդի նիստ:

Օրակարգում 1.Հանդիպում-քննարկում դպրոցի տնօրենի պաշտոնի հավակնորդ Գոռ Այվազյանի հետ:

Տեղի ունեցավ հանդիպում տնօրենի պաշտոնի հավակնորդ Գոռ Այվազյանի հետ :

Տնօրենի պաշտոնի հավակնորդ Գ. Այվազյանը ներկայացրեց դպրոցի զարգացման իր ծրագիրը, նշեց հիմնական ուղղությունները, խնդիրները և դրանց լուծման իր ընտրած ուղիները:

Մանկավարժական խորհրդի անդամները տնօրենի պաշտոնի հավակնորդին լսելուց հետո ներկայացրեցին մի քանի առաջարկներ.

ա . մանկավարժական աշխատողների խրախուսման համակարգի ներդրում,

բ. դպրոցի շենքային պայմանների բարելավում,

գ. ընդլայնել ՏՀՏ-ների և նորարական տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսների կազմակերպման և անցկացման ժամանակ:

Քննարկման ավարտին մանկավարժական խորհրդի անդամները հավակնորդ Գ.Այվազյանին իրենց զորակցությունը հայտնեցին և մաղթեցին հաջողություն առաջիկա մրցույթին:

Մանկավարժական խորհրդի նախագահ Գ .Այվազյան

Քարտուղար Ք. Մեհրաբյան